

ՄՈՒՀԱՄԷՏԻ որդին ՀԻՒՍԷՅԻՆ, մօր կողմէ ԱԳԻԼԻ որդի ՇԱՊԱՆԻ որդի Հաճի ԱԼԻի զուտոր՝ ՄԷՆՆԻ Հանրմ:

Հիճրէթի 998=1579 թուականը կը բող այս և այլ հեօնքներէն զատ, Հալէպի Յունաց Մետրապոլտարանը ունի Գեօման մը, որուն յենլով կը պահանջէ որ բոլոր գերեզմանատուներու միայն իրենց սեպհականութիւն ըլլալը բնորոշուի. այդ իմաստով ալ զատ բացած են և զատը կը չարունակուի:

Այս ֆէրմանը կը կրէ հիւնքի 1 ձէմազիւլ ախըր 1135 թուականը, կընքուած է Դազի Սուլթան Ահմէտ Խան Գ.ի կողմէ և ուղղուած Հալէպի կուսակալ Քեհկա Փաշային, որով կը հրամայուի «Գերեզմանատան այգիի մը հետ փոխանակութիւնը արգիլել և գերեզմանատան վրայ բռնութիւն և ոտնձգութիւն ի գործ չդնել»: Հրովարտակ մըն ալ կայ Մարօնիթներուն քով, ըստ որում գերեզմանատները կը պատկանին Հայոց, Յունաց, Ասորեոց և Մարօնիթներուն: Լատինները, երկրորդ մասին կից և անկէ բաժնուած ու պարսպի մէջ առնուած առանձին գերեզմանատուն մը ունին, զէպի արեւմուտք և հիւսիս երկարող. այս գերեզմանատունը ժամանակին զընուած է վերոգրեալ հասարակութիւններու մէկէն կամ միւսէն, և որուն մէջ, հակառակ կատարուած խուզարկութեանց, հայերէն ունէ տապանագիր տեսած չենք:

Քրիստոնեայ այս Գերեզմանատանը՝ 1894 էն յառաջ պարսպապատ չէին. քաղաքի և Ազիզիէ թաղի քրիստոնեայ հասարակութիւններ, չաբաթ, կիրակի և տօն օրեր, խումբով հոն կերթայն զբօսանքի համար: 1894 ին Հալէպի կուսակալ ՀԱՃԻ ՕՍՄԱՆ ՆՈՒՐԻ ՓԱՇԱՅԻ օրով և ասոր արտօնութեամբ՝ երեք մասերն ալ պարիսպի մէջ կ'առնուին, ուր կը մնան մինչև այսօր: Հալէպի ղինուորական հրամանատար և Սարը մականունանալ Ֆէրիթ ՍԱՊԻԹ ՓԱՇԱ բանակի ղինուորները մարզանքի տանելու համար, քրիստոնեայ Գերեզմանատներէն կ'անցընէր զանոնք: Փաշան նկատելով որ ղին-

ւորներու մարզական կանոնաւոր քայլերուն համար գերեզմանատանց քարերը արգելք կըլլան, կը մտադրէ անոնց մէջէն ճամբայ մը բանալ: Արդարեւ, այդ օրերուն գիշեր մը, զաղտագողի կերպով ղինուորները զօրանոցէն քաղաք իջեցընել կու տայ, և Գերեզմանատանց մէջէն, իր հրամայած ձեւով ճամբաներ բանալ կու տայ: Հետեւեալ առտուն Հալէպի քրիստոնեայ ամբողջ հասարակութիւնը տեղեկացած էր արդէն, գիշերանց տեղի ունեցած բռնաբարութեան: Յուզուած ընդհանուր էր: Յունաց Մետրապոլիտ Տ. ՏԻՄԻՏԻՈՒՍ ԱՆՏԻՈՆ նախագահութեան տակ մասնախումբ մը կը ընտրուի քրիստոնեայ հասարակութեանց ներկայացուցիչներէն, և ընդհանուր հանգանակութեան ձեռնարկուելով և իբր ընտանեկան զամբարան, հարուստներու մասնաւոր թաղեր ծախելով, կարելի կ'ըլլայ երեք անջատ մասերն ալ պարսպել:

Յանձնախումբին Հայ անգամները եղած են՝ հանգուցեալք Աւետիս Տապալազ, Նաման Սուքիաս, և Յակոբ Նահաս: Անտոն Շաւլլա, իր եղբօր Ապուտ Շաւլլաի մահուան առթիւ, իբր յիշատակ, իր ծախքովը չինել կու տայ երեք մեծանիստ դռներ, երկաթեայ զոյգ փեղկերով և բոլորին վրայ արարերէն լեզուաւ արձանագրել կու տայ բանաստեղծական վերտառութիւններ: Այս երեք դուռները գրեթէ միշտ փակ կը մնան և պահակներու յատկացուած տուներու յարակից փոքր դուռները կը ծառայեն մուտքի և ելքի:

Հալէպի քրիստոնեայ հասարակութեանց միացեալ այս հին գերեզմանատուներու բաժանումը՝ ներկայ պայմաններու մէջ, գրեթէ անկարելի է. հակառակ անոր որ մասնաւոր առեանը (Լիւնցէի Թանհիս ու Թանրի) վճուեց որ 1914 ին Հալէպի կուսակալութեան Մարզահամարի տոմարին մէջ արձանաւորուած քրիստոնէից թիւին համեմատութեամբ բաժնուի ան: Յոյները չբաւարարուելով զիմեցին Վերաքննութեան ուր հաստատուեցաւ միեւնոյն վճիռը, և սակայն հարցը կը մնայ հոն ուր էր: